ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1 Արևելյան Հայաստանի արքունի գրագրության մեջ ո՞ր թվականից հետո սկսեց կիրառվել պահլավերենը (միջին պարսկերեն).

1) 301 թ.
2) 337 թ.
3) 387 թ.
4) 368 թ.

2 Սմբատ Բագրատունին ո՞ր թվականների ընթացքում է իրականացրել Անին ընդգրկող պարիսպների երկրորդ գծի կառուցումը.

1) 979-987 թթ.
2) 964-977 թթ.
3) 978-990 թթ.
4) 977-989 թթ.

3 Ե՞րբ է իրականացվել Բեհաէդդին Շաքիրի և Ջեմալ Ազմիի մահապատիժը հայ վրիժառուների կողմից.

1) 1921 թ. մարտի 15–ին
2) 1922 թ. ապրիլի 17–ին
3) 1921 թ. ապրիլի 25–ին
4) 1921 թ. դեկտեմբերի 6–ին

4 Մարաստանի, Բաբելոնի և Հայաստանի դաշնակից զորքերը ո՞ր թվականին են արշավել դեպի Ասորեստանի վերջին հենակետ Կարքեմիշ.

1) Ք. ա. 606 թ.
2) Ք. ա. 609 թ.
3) Ք. ա. 607 թ.
4) Ք. ա. 612 թ.

5 Ռուս–թուրքական երկրորդ կոնֆերանսին մասնակցելու նպատակով հայկական պատվիրակությունը ե՞րբ է ուղևորվել Մոսկվա.

1) 1921 թ. հունվարին
2) 1920 թ. հոկտեմբերին
3) 1920 թ. մայիսին
4) 1921 թ. ապրիլին

6 Ե՞րբ է կառավարել հայոց իշխան Աշոտ Բագրատունին.

1) 685–690 թթ.
2) 690–693 թթ.
3) 686–689 թթ.
4) 656–661 թթ.

7 Ե՞րբ է Բարձր դռան հատուկ հրամանով հայկական դպրոցների ծրագրերից հանվել «Հայոց պատմություն» առարկան.

1) 1882 թ.
2) 1890 թ.
3) 1879 թ.
4) 1880 թ.

8 Հակախորհրդային գործունեության մեղադրանքով Անդրանիկ Մարգարյանը ե՞րբ է դատապարտվել երեք տարվա ազատազրկման.

1) 1975 թ. մարտին
2) 1973 թ. ապրիլին
3) 1974 թ. փետրվարին
4) 1972 թ. ապրիլին

9 Ք. ա. 830–ական թվականներին Հայկական լեռնաշխարհում հայտնի համադաշնություններից ո՞րն էր ամենամեծը.

1) Էթիունի
2) Նաիրի
3) Դիաուխի
4) Մելիդ

10 Գրիգոր Լուսավորիչը ո՞ր եկեղեցին է հիմնադրել Աշտիշատում.

1) Ս. Ամենափրկիչ
2) Ս. Աստվածածին
3) Իննակնյան Ս. Կարապետ
4) Ս. Երրորդություն

11 Հայաստանում 1967 թ. որքա՞ն գիտահետազոտական հիմնարկ էր գործում.

1) 121
2) 112
3) 132
4) 141

12 Ո՞վ է եղել «Ազատության ավետաբեր» թերթի փաստական խմբագիրը.

1) Հովհաննես Աբելյանը
2) Նիկոլ Աղբալյանը
3) Գրիգոր Արծրունին
4) Ներսես Աբելյանը

13 **Ովքե՞ր էին առաջնորդում աշխարհազորային զորամասերը Երվանդունիների բանակում.**

1) մաղխազները
2) գավառակալ իշխանները
3) բդեշխները
4) զորավար-սպարապետները

14 **Բյուզանդական ո՞ր զորավարին է ճակատամարտում սպանել Արտավան Արշակունին.**

1) Մավրիկիոս
2) Ակակիոս
3) Սիտտաս
4) Բուզես

15 **Ո՞վ է ժամանակակից երկրաքիմիա գիտաճյուղի հիմնադիրը.**

1) Խորեն Սինանյանը
2) Անդրեաս Արծրունին
3) Զակոմո Չամչյանը
4) Վահան Արծրունին

16 **Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիայի հետ որտե՞ղ է ստորագրվել զինադադարի պայմանագիրը.**

1) Մուդրոսում
2) Սևրում
3) Լոզանում
4) Սան Ռեմոյում

17 **Ո՞ր պատմիչի աշխատությունից է մեջբերված խոսքը.**

« …գոյություն ունեն հայոց լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր է սեփական ձայնով և ոչ թե մուրացածո լեզվով եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ ամբողջ բազմության սրտերը»:

1) Մովսես Խորենացու
2) Ղազար Փարպեցու
3) Կորյունի
4) Վարդան Արևելցու

18 **Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.**

«Դա հազվագյուտ մարտ էր այս պատերազմի պատմության մեջ… Հայերը… ցույց տվեցին, որ իրենք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»:

1) Վեհիբ փաշան
2) գեներալ Պոպովը
3) Հովհաննես Բաղրամյանը
4) Թովմաս Նազարբեկյանը

19 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է սխալ.**

1) Վանի թագավորությունում զորքի գերագույն հրամանատարի պաշտոնը կոչվում էր առաջին սպարապետ:
2) Հայկազուն–Երվանդունիների գահակալության սկզբնական շրջանում արքայի տիտղոսը հայտնի էր «Հայոց թագավոր» անունով:
3) Դարեհ I–ի թողած եռալեզու արձանագրությունը հայտնի է «Բեհիսթունյան» անունով:
4) Հայկազուն–Երվանդունիների օրոք հիշատակվող գործակալներից մեկը կոչվում էր արքունի հացարար:

20 **Ինչպե՞ս էր կոչվում Վարդանանց երդումը.**

1) «Վարդանանց ուխտ»
2) «Վասն հայրենյաց»
3) «Հավատո ուխտ»
4) «Հավատո հանգանակ»

21 **Գտնել ճիշտ պատասխանը.**

Հայաստանի Հանրապետությունը կարողացավ մասնակցել Փարիզի խորհրդաժողովին և իրավական (դե յուրե) ճանաչում ստանալ Անտանտի երկրների կողմից, որովհետև՝

1) նորաստեղծ հայկական պետության զինված ուժերը պատերազմում էին Խորհրդային Ռուսաստանի դեմ:
2) այդ մասին տերությունների ղեկավարները պայմանավորվել էին Բրեստի բանակցությունների ժամանակ:
3) նորաստեղծ հայկական պետությունը փաստացի դարձել էր աշխարհամարտի մասնակից կողմ:
4) նա այդ իրավունքը ստացել էր Ազգերի լիգայի կողմից:

22 **Ինչո՞վ էր պայմանավորված 1940–ական թթ. երկրորդ կեսին Խորհրդային Միության, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի հեղինակության բարձրացումը սփյուռքահայության շրջանում.**

ա. Երկրորդ աշխարհամարտում տարած հաղթանակով
բ. խորհրդային երկրում արդյունաբերացման հաջող արդյունքներով
գ. հայկական հողերը Թուրքիայից պահանջելու և Հայաստանին միացնելու մտայնությամբ
դ. Խորհրդային Հայաստանում ազգային կուսակցությունների գործունեության վերականգնմամբ
ե. սառը պատերազմի իրողությամբ

1) ա, բ
2) ա, գ
3) բ, ե
4) գ, դ

23 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել երրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. հայ–հռոմեական ուժերի հաղթանակը Ոսխայի ճակատամարտում
բ. Արտավազդ V-ի գահակալության սկիզբը
գ. Խոսրով I–ի գահակալության ավարտը
դ. Ներսեհ Սասանյանի՝ Հռոմի դեմ պատերազմի սկիզբը
ե. Տրդատ Արշակունու հաղթական մենամարտը գոթերի իշխանի հետ
զ. Տրդատ II–ի հաղթական արշավանքը դեպի Տիզբոն

1) ե
2) բ
3) զ
4) դ

24 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Պողոս Նուբար փաշայի նշանակվելը Եվրոպայում կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ
բ. Վեց տերությունների (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ավստրո-Հունգարիա) դեսպանների մասնակցությամբ խորհրդաժողովի սկիզբը Կ.Պոլսում
գ. Մ. Գիրսի և Հ. Վանգենհայմի՝ Արևմտյան Հայաստանի համար 6 կետից բաղկացած բարենորոգումների ծրագրի կազմումը
դ. Բալկանյան առաջին պատերազմի ավարտը
ե. Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծումը
զ. Հայոց ազգային բյուրոյի ստեղծումը

1) բ
2) զ
3) ա
4) դ

25 **Արտաշես I–ի օրոք Մեծ Հայքին միացված տարածքները համապատասխանեցնել աշխարհագրական ուղղությանը.**

1. արևելք	ա. Դերջան
2. հարավ	բ. Գուգարք
3. արևմուտք	գ. Ծոփք
4. հյուսիս	դ. Փայտակարան
	ե. Տմորիք

1) 1–դ, 2–գ, 3–ե, 4–ա
2) 1–ե, 2–դ, 3–ա, 4–բ
3) 1–ե, 2–գ, 3–բ, 4–դ
4) 1–դ, 2–ե, 3–ա, 4–բ

26 **Կատարել համապատասխանեցում.**

Անուն

1. Խ. Մուղդուսի
2. Լ. Բերիա
3. Ն. Ստեփանյան
4. Ն. Այվազով
5. Գ. Հարությունյան

Պաշտոն

ա. ՀՍԽՀ Չեկայի նախագահ
բ. ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար
գ. Խորհրդային Հայաստանի ներքին գործերի ժողկոմ
դ. Խորհրդային Հայաստանի մարքսիզմ–լենինիզմի ինստիտուտի տնօրեն
ե. Անդրկովկասի կուսակցական երկրային կոմիտեի առաջին քարտուղար
զ. ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմ

1) 1–գ, 2–ե, 3–դ, 4–ա, 5–բ
2) 1–ա, 2–ե, 3–գ, 4–բ, 5–զ
3) 1–դ, 2–ա, 3–գ, 4–ե, 5–բ
4) 1–գ, 2–բ, 3–դ, 4–ա, 5–զ

27 **Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) Ըստ ավանդության՝ Բելի նկատմամբ Հայկի տարած հաղթանակի տարին (Ք. ա. 2492 թ.) համարվել է Հայոց մեծ թվականի սկիզբը:
2) Վան և Ուրմիա լճերի միջև Արամ անունով երկիր հիշատակվել է դեռևս Ք. ա. XXIII դարում:
3) Բնիկ հայկական ավանդության համաձայն՝ Հայ(ա) աստծու անունով մեր ժողովուրդը կոչվել է հայ, իսկ երկիրը՝ Հայք, Հայաստան:
4) Հայկական ավանդության համաձայն՝ Արամայիսի անունով են կոչվել Արմավիր քաղաքը և Արագած լեռը:

28 **Լևոն I իշխանը բյուզանդացիներից ե՞րբ է գրավել Ադանա, Մսիս և Տարսոն քաղաքները.**

1) 1134 թ.
2) 1129 թ.
3) 1132 թ.
4) 1135 թ.

29 **ՀՀ խորհրդարանական ո՞ր ընտրություններում է հաղթել «Միասնություն» դաշինքը.**

1) 1995 թ. հուլիսի 5–ի
2) 2003 թ. մայիսի 25–ի
3) 1999 թ. մայիսի 30–ի
4) 2007 թ. մայիսի 12–ի

30 Ո՞վ էր ղեկավարում Վանի Այգեստան թաղամասի ինքնապաշտպանության համար ստեղծված զինվորական մարմինը.

1) Հակոբ Կոտոյանը
2) Արամ Մանուկյանը
3) Հայկակ Կոսոյանը
4) Արմենակ Եկարյանը

31 Ո՞ր պատմիչն է նկարագրում Տիգրան II–ի ու Պոմպեոսի հանդիպումը Արտաշատի մոտ.

1) Տակիտոսը
2) Ապպիանոսը
3) Պոլիբիոսը
4) Պլուտարքոսը

32 Ո՞ւմ մասին է խոսքը մեջբերված հատվածում.

«… [Նա] *Ուրարտուի անցյալի առաջին հետազոտողներից մեկն է, շատ լավ նկատել ու ընդգծել է աստուրական վայրենի ոգու և Ուրարտուի շատ ավելի մեղմ ու մարդկային ոգու միջև եղած հակադրությունը»:*

1) Ադոնցի
2) Գլինկայի
3) Բրոսեի
4) Նիկոլսկու

33 Ո՞վ է ստորև մեջբերված խոսքերի հեղինակը.

«Միայն են բոլոր էն մարդիկ, որոնք կարծում են, թե էս ամենը կարող էր անցնել առանց ծայրահեղ դժգոհության բռնկումի, առանց հեղափոխության: Այլն սխալ են նրանք, որոնք կարծում են, թե հեղափոխությունը դրսեցիները՝ ռուսահայերն են սկսել Տաճկաստանում»:

1) Անդրանիկ Օզանյանը
2) Հովհաննես Թումանյանը
3) Արամ Մանուկյանը
4) Ղևոնդ Ալիշանը

34 Ե՞րբ է ընդունվել հետևյալ որոշումը.

«Պատրաստ լինել իշխանությունը գրավելու, երբ նեցուկ կունենանք մի հարևան երկիր, որով հնարավոր կլինի կապվել բանվորա-գյուղացիական Ռուսաստանի հետ»:

1) 1920 թ. մայիսին
2) 1920 թ. նոյեմբերին
3) 1920 թ. հունվարին
4) 1920 թ. օգոստոսին

35 **Տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ.**

1) Ռուսաստանում միապետական կարգերի տապալման օրերին առաջացած քաղաքական յուրօրինակ իրադրությունը հայտնի է երկիշխանություն անունով:
2) Անդրկովկասում 1917 թ. նոյեմբերի 15–ին կազմավորված գործադիր նոր մարմինը կոչվել է Անդրկովկասյան դումա:
3) Ռուսաստանում 1917 թ. մարտի 2–ին ստեղծված կառավարությունը հայտնի է Պետրոգրադի բանվորների և զինվորների միացյալ խորհուրդ անունով:
4) Պետական IV դումայի կովկասյան հինգ պատգամավորներից 1917 թ. մարտի 9–ին ստեղծված գործադիր իշխանության նոր մարմինը կոչվել է Անդրկովկասյան հատուկ կոմիտե:
5) Ռուսաստանում 1917 թ. հոկտեմբերի 7–ին ձևավորված բարձրագույն գործադիր իշխանությունը կոչվել է Ժողովրդական կոմիսարների խորհուրդ:

36 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) 1920–ական թթ. երկրորդ կեսից ԽՍՀՄ–ում իրականացվող քաղաքական կուրսը կոչվում էր նոր տնտեսական քաղաքականություն:
2) Այն կազմակերպությունը, որին պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում օգտագործում էին խորհրդային իշխանությունները, կոչվում էր «Ազատ եկեղեցական եղբայրություն» կամ «Նոր եկեղեցի»:
3) ԽՍՀՄ–ում առաջնահերթ կարգով 1920-ական թթ. սկզբներին թեթև և սննդի արդյունաբերության ստեղծման քաղաքականությունը կոչվեց արդյունաբերացում:
4) Հայաստանում 1925 թ. շրջանառության մեջ մտած գյուղատնտեսական ապրանքների հարկման ձևը հայտնի է գյուղմիասիարկ անունով:
5) Երևանում 1923 թ. նոյեմբերին գումարված այն համաժողովը, որտեղ հնչակյանները հանդես եկան իրենց կուսակցության վերացման մասին հայտարարությամբ, հայտնի է ինքնավերացման համագումար անունով:
6) 1930–ական թթ. կեսերին ԽՍՀՄ–ում հաստատված համակարգը հայտնի է «ամբողջատիրական» անունով:

37 **Գտնել ճիշտ պատասխանները.**

Հռոմը լրջորեն նախապատրաստվում էր Հայկական տերության դեմ պատերազմի, որովհետև՝

1) նպատակ ուներ խափանելու հայ–պոնտական միացյալ ուժերով Հունաստան ներխուժելու հին ծրագիրը, որը մշակել էր Միհրդատ Եվպատորը:
2) Հայկական տերությունը դուրս էր եկել Միջերկրական ծով և ընդհուպ մոտեցել էր Եգիպտոսի սահմաններին:
3) համարում էր, որ պետք է շտապել և հարձակվել Հայաստանի վրա մինչև հայ–պարթևական դաշինքի կնքումը:
4) հզոր Հայաստանը նրա առջև փակել էր Արևելք տանող բոլոր ճանապարհները:
5) ձգտում էր վրեժ լուծելու Տիգրան Մեծից՝ Հռոմի դեմ պատերազմում Միհրդատ Եվպատորին ցուցաբերած ռազմական մեծ օգնության համար:

38 **Թվարկվածներից որո՞նք Մանազկերտի ճակատամարտի հետևանքներ չեն.**

1) Բյուզանդացիները հսկայական կորուստներ կրեցին, իսկ Դիոգենես կայսրը գերի ընկավ:
2) Տաշիր–Զորագետի, Կարսի (Վանանդի) և Սյունիքի թագավորները շտապեցին հպատակություն հայտնել սելջուկներին:
3) Բյուզանդացիները ստիպված ընդունեցին իրենց պարտությունը և հաշտություն կնքեցին թյուրք–սելջուկների հետ:
4) Հաստատվեց սելջուկյան պետության իշխանությունը Փոքր Ասիայում:
5) Հայաստանի միայն հարավային ու արևմտյան շրջաններն ընկան թյուրք–սելջուկների տիրապետության տակ:

39 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Շահ Աբասը ֆրանսիական սպաների ու վարպետների օգնությամբ վերակազմել ու վերազինել էր պարսկական բանակը, ձուլվել էին թնդանոթներ:
2) Շահ Աբասը 1604 թ. ձեռնամուխ եղավ օսմաններին զիջած տարածքների վերագրավմանը:
3) XVII դ. սկզբին օսմանյան արքունիքում սկսվել էին երկպառակություններ, գահակալական պայքար, երկրում ծավալվում էին գյուղացիական ու զինվորական ապստամբություններ:
4) Շահ Աբասը, մեծ բանակով անցնելով Արաքսը, մտավ Նոր Ջուղա, ապա գրավեց Նախիջևանը:
5) Հայ բնակչության տեղահանությունը սկսվեց 1605 թ. օգոստոսին:
6) Պարսից զորքը 1606 թ. վճռական ճակատամարտում պարտության է մատնել օսմանյան բանակին:

40 **Ընտրել ճիշտ պնդումները.**

1) Պարսից շահը ճանաչեց Սյունիքում ստեղծված Դավիթ բեկի իշխանությունը, նրա հետ դաշինք կնքեց և իրավունք վերապահեց նրան դրամ հատելու:
2) Ֆլորենցիայում Իսրայել Օրուն մերժեցին Հայաստանի ազատագրման գործին մասնակցել, քանի որ Թուրքիայի հետ 1699 թ. արդեն կնքել էին հաշտության պայմանագիր:
3) Խամսայի մելիքություններից բացի՝ Արցախի ինքնավարության մարմնավորում էր նաև Ամարասի կաթողիկոսությունը:
4) Հայերի պայքարին օժանդակելու ռուսական կայսեր խոստումներով 1724 թ. սկզբին Ռուսաստանից Արցախ է ժամանել հայազգի Իվան Կարապետը:
5) Արցախի իրադրությանը ծանոթանալու համար Հովսեփ Էմինը Գանձասարում այցելել է Իբրահիմ խանին, որից հետո մեկնել է Խոյ:

41 **Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Միլանի հրովարտակի ընդունումը
2) մազքութների ներխուժումը Հայաստան և Վաղարշապատի գրավումը
3) Օշականի Ցլու գլուխ լեռան մոտ տեղի ունեցած ճակատամարտը
4) Արիստակես կաթողիկոսի գահակալության ավարտը
5) սպարապետ Վաչե Մամիկոնյանի զոհվելը
6) Հուսիկ կաթողիկոսի գահակալության սկիզբը

42 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) ՀՀ դառնալը ՄԱԿ–ի լիիրավ անդամ
2) ՀՀ–ում բազմակուսակցական համակարգ ստեղծելու մասին օրենքի ընդունումը
3) Վազգեն Սարգսյանի նշանակվելը ՀՀ պաշտպանության առաջին նախարար
4) ՀՀ–ում առաջին նախագահական ընտրությունների անցկացումը
5) Լիտվայի Հանրապետության կողմից ՀՀ-ի անկախության ճանաչումը և դիվանագիտական հարաբերությունների հաստատումը

43 **Կատարել համապատասխանեցում.**

Հայաստանի ո՞ր գավառներում են տեղի ունեցել թվարկված իրադարձությունները.

Ա. Արշակունի թագավորների դամբարանների թալանը պարսից զորքի կողմից
Բ. Թեոդորոս Ռշտունու գլխավորած հայոց զորքի օգնության հասնելը Արծափ ամրոցին
Գ. Ակոռիի ճակատամարտում հայերի փայլուն հաղթանակը պարսից զորքի նկատմամբ
Դ. Վասպուրականի Սմբատ իշխանի գլխավորությամբ հայ ապստամբների կողմից արաբական զորքի ջախջախումը Գուկանք գյուղի մոտ
Ե. Դողսի ճակատամարտը

1) Բագրևանդ
2) Ռշտունիք
3) Արագածոտն
4) Դարանաղյաց
5) Մասյացոտն
6) Կոգովիտ

Ա	Բ	Գ	Դ	Ե

44 **Կատարել համապատասխանեցում.**

Հեղինակ

Ա. Առաքել Դավրիժեցի
Բ. Նիկողայոս Մառ
Գ. Անտոն Գարագաշյան
Դ. Հովսեփ Գաթըրճյան
Ե. Ալեքսանդր Երիցյան

Աշխատություն

1) «Քննական պատմութիւն հայոց»
2) «Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում»
3) «Անի»
4) «Պատմութիւն Հայոց»
5) «Գիրք պատմութեանց»
6) «Տիեզերական պատմություն»

Ա	Բ	Գ	Դ	Ե

45 **Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը.**

1) Միջնադարյան Հայաստանի նշանավոր ուսումնագիտական կենտրոններից էր Գլաձորի համալսարանը, որի աշխատանքները ղեկավարել են Եսայի Նչեցին, Հովհաննես Իմաստասերը, Հովհան Որոտնեցին:
2) Կիլիկյան Հայաստանում շրջանառության մեջ են դրվել նաև խաչակրաց օրենքները՝ ասիզներ անվանումով:
3) Ուշ միջնադարում Հայաստանի տնտեսական ու քաղաքական ծանր կացությունը առանձնապես բացասական հետևանքներ թողեց մանրանկարչության բնագավառում:
4) «Աշխարհացոյց»-ը հին և վաղմիջնադարյան ժամանակներում հայտնի աշխարհի աշխարհագրական նկարագրությունը պարունակող աշխատություն է և հիմնված է Պտղոմեոսի «Աշխարհագրության ձեռնարկ»-ի մեթոդաբանության վրա:
5) Զարգացած միջնադարում հայկական տոմարագիտական մտքի նվաճումների արդյունքում հնարավոր դարձավ Հայոց մեծ թվականի սահմանումը:
6) Սկևռայի դպրոցը հիմնադրել էր Ներսես Շնորհալին:

Բ ՄԱԿԱՐԴԱԿ

46 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. Կովկասյան ճակատում գեներալ Միխայիլ Լոռիս–Մելիքովի գլխավորությամբ կռվող ռուսական զորամիավորումը կոչվում էր Կովկասյան կորպուս:
բ. 1849 թ. ստեղծված և Երևան, Նոր Բայազետ, Նախիջևան, Ալեքսանդրապոլ ու Կարս գավառներն ընդգրկող վարչական միավորը կոչվում էր Երևանի նահանգ:
գ. Հովսեփ Արղությանի ղեկավարած մարմինը կոչվում էր Հայոց ազգային բյուրոյի գործադիր (կարգադրիչ) մարմին:
դ. Օսմանյան կայսրությունում գտնվող Անտիոքի սուրբ վայրերին տիրելու համար տարբեր եկեղեցիների միջև ծագած վեճը հայտնի է «Արևելյան հարց» անունով:
ե. Արևմտահայության կյանքը կազմակերպող օրենսդիր մարմինը, ըստ Ազգային սահմանադրության, կոչվում էր Ազգային խորհուրդ:
զ. Ռուսաստանում 1844 թ. ստեղծված վարչական մեծ միավորը կոչվում էր Կովկասի փոխարքայություն:
է. Ղրիմի պատերազմի արդյունքում միջազգային դիվանագիտության մեջ առաջին անգամ հայտնված հիմնախնդիրը ստացել է Հայկական հարց անվանումը:

1) բ, դ, է
2) ա, գ, զ
3) գ, ե, է
4) ա, բ, զ

47 **Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ հնդեվրոպական երևույթ է և հայոց մեջ ունի վաղնջական ակունքներ:
բ. Մենուան հարկատու դարձրեց Մելիդի թագավորությունը, որը հետագայում կոչվել է Մանա թագավորություն:
գ. Հայրենիքի սահմանների պաշտպանությունը կազմակերպելու համար Արտաշես I–ի ստեղծած չորս միավորները կոչվում էին զորավարություններ:
դ. Աքեմենյանների օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր հյուպարքոս:
ե. Արգիշտի I–ի զորքերը հաղթարշավով հասել են Ալիշտու, այսինքն՝ Ալաշկերտի հովիտ:
զ. Արարատյան համահայկական թագավորության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «խորհրդականներ»:
է. Զրադաշտականությունը իր բնույթով միաստվածային կրոն էր:
ը. Արարատյան համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:

1) ա, բ, դ, ը
2) գ, ե, զ, ը
3) ա, դ, է
4) բ, ե, է

48 **Թվարկվածներից որո՞նք են Հայաստանում ենթակա թագավորությունների առաջացման պատճառներ.**

ա. Կենտրոնախույս ուժերին աջակցում էր հայոց կաթողիկոսությունը:
բ. Բյուզանդիան հայոց պետությունը թուլացնելու քաղաքականություն էր վարում:
գ. Հայ վաճառականությունը լիակատար աջակցություն էր ցույց տալիս երկրի մասնատման քաղաքականությանը:
դ. Արտաքին գործոնների պատճառով Հայաստանի տնտեսական զարգացումը չհանգեցրեց միասնական կենտրոնացված պետության ստեղծմանը:
ե. Երկրի նշանավոր իշխանությունները տնտեսական և ռազմական բավարար հզորություն ունեին և հաճախ անկախության էին ձգտում:
զ. Միջնադարյան քաղաքներն անկում էին ապրել և հանդես չէին գալիս որպես թագավորական իշխանության դաշնակից:
է. Կենտրոնախույս ուժերին օժանդակում էր Արաբական խալիֆայությունը:
ը. Բագրատունիները կենտրոնացված և միասնական պետություն ստեղծելու ձգտում չէին ցուցաբերում:

1) ա, բ, զ, ը
2) բ, դ, ե, է
3) ա, դ, զ, է
4) բ, գ, ե, ը

49 **Թվարկվածներից որո՞նք 1921 թ. Փետրվարյան ապստամբության արդյունքներից չեն.**

ա. Խորհրդային իշխանությունը ստիպված էր առավել զգուշորեն գործել:
բ. Վճռական քայլեր ձեռնարկվեցին երկրի սոցիալ–տնտեսական դրությունը բարելավելու ուղղությամբ:
գ. Ապստամբության ղեկավարները ենթարկվեցին առավելագույն պատժի՝ գնդակահարության:
դ. Հայկական բանակի աքսորված սպաներին ազատ արձակեցին:
ե. Ապստամբության բոլոր մասնակիցներին, ներառյալ ղեկավարներին, շնորհվեց համաներում:
զ. Հայկական բանակի աքսորից ազատված սպաներին թույլ չտրվեց վերադառնալ Հայաստան:
է. Շարունակվեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունը:

1) բ, գ, է
2) ա, դ, ե
3) ա, բ, զ
4) գ, զ, է

50 **Տիգրան Մեծի նվաճումներից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Կորդուքի միացումը Մեծ Հայքին
բ. Պտղոմայիս քաղաքի գրավումը
գ. Ասորիքի գրավումը
դ. Ծոփքի միացումը Մեծ Հայքին
ե. Հրեաստանի և Նաբաթեա թագավորության կողմից Հայոց արքայի գերիշխանության ընդունումը
զ. Կապադովկիայի գրավումը
է. Օսրոյենեի, Ադիաբենեի և Միգդոնիայի միացումը Հայոց թագավորությանը
ը. Վիրքի և Աղվանքի հպատակեցումը
թ. Մարաստանի գրավումը
ժ. պարթևների թագավորանիստ Էկբատանի գրավումը

1) ժ
2) ը
3) է
4) գ

51 **Հայոց կաթողիկոսների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

ա. Հովհաննես Ա Մանդակունի
բ. Սահակ Ձորոփորցի
գ. Ներսես Գ Տայեցի
դ. Ներսես Բ Բագրևանդացի
ե. Հովսեփ Ա Վայոցձորցի
զ. Բաբգեն Ա
է. Կոմիտաս Մամիկոնյան
ը. Սահակ Պարթև
թ. Հովհաննես Բ Գաբեղենացի
ժ. Գյուտ

1) ե, ը, ժ, ա, դ, զ, թ, է, գ, բ
2) ը, ե, ժ, ա, զ, դ, թ, է, գ, բ
3) ե, ը, ժ, ա, զ, թ, դ, է, բ, գ
4) ը, ժ, ե, զ, ա, դ, թ, գ, է, բ

52 **Թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. 89-րդ Թամանյան դիվիզիայի վերադառնալը Հայաստան
բ. ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովի գնդակահարությունը
գ. Պոտսդամի կոնֆերանսում հայկական տարածքների հարցի քննարկումը
դ. ԽՍՀՄ կառավարության կողմից խորհրդա–թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի դենոնսացիայի ենթարկելը
ե. Հյուսիսատլանտյան դաշինքի ստեղծումը
զ. Կարապետ Սիմոնյանին ԽՍՀՄ հերոսի կոչում շնորհելը
է. Թուրքիայի անդամակցելը Հյուսիսատլանտյան դաշինքին
ը. Ի. Ստալինի մահը
թ. Լազր Չափչախյանին ԽՍՀՄ հերոսի կոչում շնորհելը
ժ. Նելսոն Ստեփանյանի զոհվելը

1) դ
2) գ
3) ե
4) ա

53 **Կատարել համապատասխանեցում.**

1. Նանե
2. Տիր
3. Անահիտ
4. Արեգ–Միհր
5. Աստղիկ
6. Վահագն

ա. մայրության, պտղաբերության, արգասավորության աստվածուհի
բ. արևի, լույսի, կրակի և արդարության աստված
գ. ռազմի, քաջության և ամպրոպի աստված
դ. սիրո, լույսի և գեղեցկության աստվածուհի
ե. ընտանիքի հովանավոր
զ. հյուրընկալության աստված
է. դպրության աստված

1) 1–ե, 2–է, 3–ա, 4–գ, 5–դ, 6–բ
2) 1–դ, 2–զ, 3–է, 4–բ, 5–ա, 6–գ
3) 1–ե, 2–է, 3–ա, 4–բ, 5–դ, 6–գ
4) 1–ե, 2–զ, 3–ա, 4–գ, 5–դ, 6–բ

54 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. Աշոտ Մսակերին հայոց իշխանաց իշխանի պաշտոնում հաջորդել է որդին՝ Տարոնի տեր Սմբատ Բագրատունին։
բ. Աշոտ Մսակերի եղբայր Շապուհը նշանակվել էր սպարապետ։
գ. Հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին Արմինիայում մեծ հեղինակություն ուներ։
դ. 850 թ. հայ նախարարները Բագարատ Բագրատունու գլխավորությամբ արաբ հարկահավաքին թույլ չտվեցին երկրի սահմանն անցնել և հենց այդտեղ էլ նրան հանձնեցին հարկերը։
ե. Բագարատ Բագրատունին և Աշոտ Արծրունին 851 թ. արաբ նվաճողներին դուրս քշեցին Տայքից։
զ. Արաբ հրամանատար Յուսուֆը փախավ խութեցիների հետապնդումից և թաքնվեց Սուրբ Խաչ եկեղեցու գմբեթում, սակայն նրան գտան և մահապատժի ենթարկեցին։
է. «Արյան լիճ» կոչվող լեռնային բարձրադիր լճի ափին արաբների դեմ տեղի ունեցած ճակատամարտն ավարտվել է հայ ապստամբների հաղթանակով։

1) ա, ե, զ
2) բ, դ, է
3) ա, գ, է
4) բ, ե, զ

55 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. Հայ քաղաքական մտքի պատմության մեջ էսէռներն առաջինն են, որ Հայկական հարցի լուծումը համարել են ամբողջական հայրենիքում հայկական պետության վերաստեղծումը:

բ. Արևմտյան Հայաստանում ստեղծված առաջին խմբակներից հայտնի է «Հայրենիքի սիրո գրասենյակը»:

գ. «Դրոշակում» 1892 թ. տպագրված ՀՅԴ ծրագրում որպես մոտակա խնդիր սահմանվել է Արևմտյան Հայաստանի անկախանալը թուրքական բռնապետությունից:

դ. Բեռլինի վեհաժողովից հետո բարեփոխումների հետ հույսեր կապող հայ գործիչները ժողովրդի քաղաքական և ազգային բաղձանքների իրականացումը սկսում են կապել Ռուսաստանի ռազմաքաղաքական աջակցությամբ զինված պայքար ծավալելու հետ:

ե. Ժողովրդավարական սկզբունքի համաձայն՝ «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության անդամները գիտեին իրենց ղեկավարներին և անդամների մեծ մասին:

զ. Արմենականները Հայկական հարցի լուծումը կապել են Եվրոպայի օգնության և համաժողովրդական ապստամբության հետ:

է. Հնչակյանները որպես հեռավոր նպատակ սահմանել են մարդու կողմից մարդու շահագործման վերացումը և սոցիալիզմի կառուցումը:

1) դ, զ, է
2) բ, դ, ե
3) գ, ե, զ
4) ա, գ, է

56 **Տրված փաստարկներից որո՞նք են սխալ.**

ա. 1918 թ. մայիսի 30-ին հայ պատվիրակները հասան Բաթում և տեղեկացրին թուրքական կողմին, որ իրենք հանդես են գալիս Հայոց ազգային խորհրդի անունից:
բ. Բաթումի պայմանագիրը ուժի մեջ է մնացել մի քանի տարի:
գ. ՀՀ առաջին կառավարությունը կազմվել է կոալիցիոն սկզբունքով, որի մեջ էին մտել ՀՅԴ, ՀԺԿ և էսէռների կուսակցությունների ներկայացուցիչները:
դ. 1920 թ. մայիսին ՀՀ տարածքը հասել էր շուրջ 70 հազար քառ. կիլոմետրի:
ե. 1919 թ. հունիսին կայացած ընտրությունների արդյունքում ՀՀ խորհրդարանն ուներ 82 անդամ, որից 5-ը՝ կին:
զ. 1920 թ. թուրք–հայկական պատերազմի ժամանակ Հայաստանն ուներ շուրջ 40–հազարանոց բանակ:
է. Բոլշևիկների ազդեցության տակ գտնվող «Սպարտակ» երիտասարդական կազմակերպությունը ստեղծվել էր 1919 թվականին:

1) ա, դ, է
2) բ, գ, ե
3) գ, զ, է
4) բ, դ, զ

57 **Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

1. Խանասորի արշավանքը
2. Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին ցարական օրենքի ընդունումը
3. Բաքվում հայ–թաթարական ընդհարումների սկիզբը
4. Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման վերաբերյալ օրենքի չեղյալ հայտարարվելը
5. Մշո Ս. Առաքելոց վանքի կռիվների սկսվելը
6. Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման վերաբերյալ օրենքի կիրառման դեմ ուղղված առաջին ցույցը Ալեքսանդրապոլում
7. հնչակյանների կազմակերպած 4–հազարանոց խաղաղ ցույցը Կ. Պոլսում

ա. 1901 թ. նոյեմբերի 6
բ. 1903 թ. հուլիսի 29
գ. 1895 թ. սեպտեմբերի 18
դ. 1903 թ. հունիսի 12
ե. 1897 թ. հուլիսի 25
զ. 1905 թ. հունվարի 9
է. 1905 թ. փետրվարի 6
ը. 1905 թ. օգոստոսի 1

1) 1–գ, 2–բ, 3–է, 4–զ, 5–դ, 6–ե, 7–ա
2) 1–ե, 2–բ, 3–ը, 4–դ, 5–ա, 6–է, 7–գ
3) 1–գ, 2–բ, 3–ը, 4–ա, 5–է, 6–ե, 7–դ
4) 1–ե, 2–դ, 3–է, 4–ը, 5–ա, 6–բ, 7–գ

58 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

1) Իշխան Դավիթ Սահառունուն Հերակլ կայսեր շնորհած աստիճանը կոչվում էր պատրիկ–կյուրապաղատ:
2) Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Բարձր Հայք նահանգը հայտնի էր «Մեծ մասն Մեծ Հայոց» անունով:
3) Նախարարական տների կրտսեր իշխանները կոչվում էին ոստանիկներ:
4) Պարսից արքայի և բյուզանդական կայսեր միջև 532 թ. կնքված հաշտությունն անվանել են «հավիտենական»:
5) Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Այրարատ նահանգի մեծ մասից կազմված վարչական միավորը կոչվեց «Ներքսագոյն Հայք»:
6) Մինչև Հերթ ոստիկանի «աշխարհագիրը»՝ արաբների կողմից ոչ մահմեդականներից գանձվող հարկը կոչվում էր գլխահարկ:
7) Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Մեծ Հայք» անունով:
8) Բարձրագույն դատական ատյանը մաս էր կազմում Կիլիկիայի հայոց պետության կառավարման գլխավոր մարմնի, որը կոչվում էր արքունիք:
9) Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Տայք նահանգը հայտնի էր «Ներքին Հայք» անունով:

59 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Սփյուռքահայության զանգվածային ներգաղթը Հայաստան կազմակերպելու համար ԽՍՀՄ կառավարությանն առընթեր ստեղծված մարմինը կոչվում էր Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտե:
2) Հայաստանում 1966 թ. ապրիլի 24–ին ստեղծված նոր գաղտնի կազմակերպությունը կոչվում էր Ազգային միացյալ կուսակցություն:
3) Փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո Երևանում ստեղծված իշխանության մարմինը կոչվում էր Հայաստանի փրկության կոմիտե:
4) Պետական մարմինը, որը 1988 թ. հունիսի 15–ին քննարկել է ԼՂԻՄ մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20–ի որոշումը, կոչվում էր ՀԽՍՀ Գերագույն ժողով:
5) ԱՄՆ–ում դաշնակցության ստեղծած Հայկական ազգային կոմիտեն նաև կոչվում է Հայ դատի հանձնախումբ:
6) 1990 թ. հունվարի 12–ին ԼՂԻՄ–ում ստեղծված կառավարման մարմինը կոչվում էր Հատուկ կառավարման կոմիտե:
7) 1989 թ. օգոստոսի 16–ին Ստեփանակերտում տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում ընտրվեց 80 հոգանոց մարմին, որը կոչվում էր Ազգային խորհուրդ:
8) Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմնի 1991 թ. օգոստոսի 23-ին ընդունած փաստաթուղթը կոչվում էր «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին»:
9) Խորհրդային Հայաստանում ձևավորված գաղտնի կազմակերպություններից «Հայկական երիտասարդական միություն»–ը հայտնի էր «Յոթ հայրենասերներ» անունով:

60 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են սխալ.**

1) Վանի թագավորության և կիմերների միջև Ք. ա. 735 թ. սկսված պատերազմը ավարտվեց քոչվորների պարտությամբ:
2) Հայ–մարական համագործակցության արդյունքում կործանվեց Աքեմենյան տերությունը:
3) Տիգրանակերտի ճակատամարտում հայկական ուժերի նահանջը նպաստեց Տիգրանակերտի գրավմանը հռոմեացիների կողմից:
4) Արածանիի ճակատամարտում հռոմեացիների պարտությունը նպաստեց հայկական դիրքերի ամրապնդմանը Կորդուքում ու Հյուսիսային Միջագետքում:
5) Արտաշատի հայ–հռոմեական պայմանագրի համաձայն՝ Հայաստանը կորցրեց իր նվաճումները Հյուսիսային Միջագետքում:
6) Երվանդ II–ի՝ Ք. ա. 360–ական թթ. սկսած հակապարսկական ապստամբությունն ավարտվեց պարտությամբ:
7) Կյուրոս Կրտսերի դեմ սկսված ապստամբությունների արդյունքում Աքեմենյան տերությունը բաժանվեց 20 սատրապությունների:
8) Ալեքսանդր Մակեդոնացու տերության ժառանգման համար պայքարն ավարտվեց տերության տրոհմամբ:

61 **Գտնել ճիշտ պատասխանները.**
Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագրի արդյունքում՝

1) Ռուսաստանը դադարեցրեց իր մասնակցությունը Առաջին աշխարհամարտին:
2) Կովկասյան ճակատում մնաց ընդամենը ռուսական երկու կորպուս:
3) Ռուսաստանը իր զորքերը շուտափույթ դուրս հանեց նաև Կարսի և Բաթումի մարզերից:
4) բոլշևիկները կորցրեցին իրենց իշխանությունը Ռուսաստանում:
5) Ռուսաստանը ճանաչեց Հայաստանի ինքնորոշման իրավունքը և անկախությունը:
6) Օսմանյան Թուրքիան իր բանակը պահեց պատերազմական վիճակում:
7) զորացրվեց Մ. Սիլիկյանի Երևանյան զորախումբը:

62 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Արգիշտի I-ի օրոք համահայկական առաջին թագավորությունն ունեցել է տարածքային ամենամեծ աճը:
2) Դարեհ I–ի դեմ Բաբելոնում տեղի ունեցած ապստամբությունը ղեկավարել է հայազգի Արախան՝ Խալդիտայի որդին:
3) Ք. ա. IV դարում գոյություն են ունեցել հայկական չորս պետություններ:
4) Ալեքսանդր Մակեդոնացին և Դարեհ III–ը նույն թվականին են սկսել գահակալել իրենց երկրներում:
5) Երվանդ Վերջինի օրոք Մեծ Հայքի հոգևոր կենտրոնը Բագավանն էր:
6) Գավգամելայի և Մագնեսիայի ճակատամարտերը հայերի համար ունեցել են նույնանման քաղաքական նշանակություն. Մեծ Հայքը և Փոքր Հայքը հռչակվել են անկախ պետություններ:
7) Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով Առաջավոր Ասիայում սկզբնավորվել է հելլենիզմի՝ հռոմեականության դարաշրջանը:
8) Հայաստանը Աքեմենյանների գերիշխանության ներքո է եղել Ք. ա. 521–334 թվականներին:

63 **Տրված փաստարկներից որո՞նք են սխալ.**

1) 1920–ական թվականներին խոշոր գաղթօջախ ձևավորվեց նաև Ամերիկայում (ԱՄՆ և Կանադա)՝ շուրջ 130 հազար հայերով:
2) 1945 թ. մայիսի 28–ին ՀՀ նախկին վարչապետ Ս. Վրացյանը դիմեց Ստալինին, Ռուզվելտին և Չերչիլին՝ խնդրելով ջանքեր գործադրել Հայկական հարցի արդարացի լուծման ուղղությամբ:
3) 1921 թ. դեկտեմբերին Խորհրդային Հայաստան ներգաղթածների թիվը 8000 էր:
4) 1947 թ. գարնանը տեղի ունեցած Հայկական համաշխարհային կոնգրեսին մասնակցում էին 22 երկրների 715 պատգամավորներ:
5) Հայ օգնության միությունը ստեղծվել է 1921 թվականին:
6) 1921-1936 թթ. Խորհրդային Հայաստան է ներգաղթել ավելի քան 42 000 հայ:
7) Գիտության և արվեստի ինստիտուտը գործել է մոտ 15 տարի՝ մինչև Հայրենական մեծ պատերազմի սկիզբը:
8) Ըստ Սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է:
9) Հայոց ցեղասպանության 100–րդ տարելիցի՝ Ծիծեռնակաբերդում տեղի ունեցած միջոցառմանը մասնակցել են ավելի քան 60 երկրների և միջազգային տասնյակ կառույցների պատվիրակություններ:

64 **Թվարկվածներից որո՞նք են տեղ գտել Մովսես Սարաֆյանի կազմած Հայաստանի ազատագրության ծրագրում.**

1) Առաջարկվում էր Ռուսաստանում բնակվող հայերից և վրացիներից կազմել կամավորական զորաջոկատներ և ռուսական զորքերի հետ ուղարկել Վրաստան:
2) Հակաթուրքական պայքարի մեջ անհրաժեշտ էր ընդգրկել նաև Տարոնի հայերին՝ նրանց տրամադրելով ռազմական հանդերձանք և զենք:
3) Հերակլ II–ը կարող էր հայ, ռուս և վրացի զինվորներ ուղարկել Երևան և գահընկեց անել տեղի խանին:
4) Հայաստանի մայրաքաղաք էր դառնալու Վաղարշապատը կամ Անին:
5) Հայաստանն ազատագրելուց հետո պետք է ստեղծվեր հայկական պետություն, և Արցախի մելիքներից մեկը դառնար Հայաստանի թագավոր:
6) Հայոց թագավորի ընտրությունը պետք է կատարեր ռուսական կայսրը, իսկ օծումը պետք է տեղի ունենար Էջմիածնում:
7) Հայաստանի կառավարությունը Մոսկվայում պետք է ունենար իր դեսպանը:
8) Կասպից ծովի ափին Հայաստանին պետք է տրամադրվեր նավահանգիստ:

65 **Իրադարձություններից ո՞ր երկուսն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Միրիոկեֆալոնի ճակատամարտը
2) Սսի դառնալը Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք
3) Ռուբեն III իշխանի գահակալման սկիզբը
4) Երուսաղեմի գրավումը Սալահ ադ Դինի կողմից
5) Խաչակրաց երրորդ արշավանքի սկիզբը
6) Սարգիս Զաքարյանի՝ ամիրսպասալարի պաշտոն ստանալը
7) Կոտմանի ճակատամարտը
8) Կոստանդին թագավորահոր մեկնելը մոնղոլների հրամանատար Բաչուի մոտ
9) Հայոց կաթողիկոսի նստավայրի տեղափոխվելը Հռոմկլայից Սիս

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Ակցիումի ճակատամարտը
2) հայոց գահի հանձնումը Տիգրան VI–ին
3) Արտավազդ III–ի գահ բարձրանալը
4) հայոց Արշակ I արքայի գահակալումը
5) Խառանի ճակատամարտը
6) Էրատոյի համատեղ գահակալումը եղբոր հետ
7) Փրաասպայի մոտ հռոմեական զորքի պարտությունը

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Գարեգին Նժդեհի ուժերի հաղթանակը Նուրի փաշայի զորքերի նկատմամբ Որոտանի կիրճում
2) Հայ ժողովրդական կուսակցության երկրորդ համագումարը
3) «Ղարաբաղի ժողովրդական կառավարության» կազմումը
4) հայ–թուրքական սահմանագծի վերաբերյալ ԱՄՆ նախագահ Վիլսոնի իրավարար որոշման հայտնումը
5) Արցախահայության 9–րդ համագումարը
6) ֆրանսիական իշխանությունների կողմից Հայկական լեգեոնի լուծարումը
7) հայ–վրացական կարճատև պատերազմի ավարտը

68 **Կատարել համապատասխանեցում.**

Մականուն

Ա. Վարդան
Բ. Ռոստոմ
Գ. Փարամազ
Դ. Արաբո
Ե. Կոմս
Զ. Գարուն Աղասի
Է. Վարդգես

Անուն, ազգանուն

1) Վահան Փափազյան
2) Մատթեոս Սարգսյան
3) Կարապետ Թուր–Սարգսյան
4) Սարգիս Մեհրաբյան
5) Առաքել Մխիթարյան
6) Հովհաննես Սերենկյուլյան
7) Արմենակ Ղազարյան
8) Ստեփան Զորյան

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

69 **Կատարել համապատասխանեցում.**

Ա. Թաթուլ Կրպեյան
Բ. Սիմոն Աչիքգյոզյան
Գ. Արկադի Տեր–Թադևոսյան
Դ. Արթուր Մկրտչյան
Ե. Մոնթե Մելքոնյան
Զ. Հենրիխ Պողոսյան

1) ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հրամանատար
2) Մարտունաշենի պաշտպանության ղեկավար
3) ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար
4) գետաշենցիների հերոսական պայքարի ղեկավար
5) «Օղակ» օպերացիայի հրամանատար
6) Մարտունու ուղղությամբ մարտնչող հայկական զորամասերի ղեկավար
7) ԼՂՀ պաշտպանության խորհրդի նախագահ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	

70 **Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը.**

1) 1991 թ. դեկտեմբերին ընդունված առաջին սահմանադրական օրենքով մինչև ՀՀ նոր սահմանադրության ընդունումը դադարեցվում էր Անկախության հռչակագրի հիման վրա ընդունված օրենքներին հակասող դրույթների գործողությունը:
2) Ապրիլյան քառօրյա պատերազմում Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը արդիական սպառազինությունը և տեխնիկան ձեռք էր բերել ՌԴ-ից, Իսրայելից և Ուկրաինայից:
3) Ազգերի լիգայում 1921 թ. ընդունված՝ հայերի համար «ազգային օջախ» ստեղծելու մասին որոշումով միջազգայնորեն ճանաչվել է Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքը:
4) Ուրուգվայի խորհրդարանը 1970 թ. հանձնարարել էր իր կառավարությանը Հայկական հարցը ներկայացնել ՄԱԿ-ի քննարկմանը:
5) Աշխարհի 25 երկրներից 1962-1982 թթ. ընթացքում Խորհրդային Հայաստան է ներգաղթել մոտ 32 000 մարդ:
6) Սևրի պայմանագրով Հայաստանի սահմանները անդրկովկասյան մյուս հանրապետությունների հետ որոշվելու էին կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ տարաձայնությունների դեպքում սահմանագիծը նշելու էր ԱՄՆ նախագահը: